Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
Սեպտեմբերի 19-ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը**
   Կարեն Բալայան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ ՊԵԿ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ռուսաստանի Դաշնություն ք. Պետրոզավոդսկ -2023թ.-ի փետրվարի 13-ից 17-ը
4. **Հրավիրող կողմը**

Հրավերը ստացվել է 20.12.2022թ.-ի թիվ 68532-2022 գրությամբ ՝ ԱՊՀ մասնակից-պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների, մաքսային իրավախախտումների շտաբի ղեկավար պարոն Ա. Յուդինցեվի կողմից:

5. **Գործուղման նպատակը** (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղումը նախատեսված էր կինոլոգիական հարցերով աշխատանքային խմբի 26-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով

6. **Քննարկված թեմաները.**

Գործուղման ընթացքում քննարկվել են

- մաքսային մարմինների իրավապահ գործունեության շրջանակներում կինոլոգիական աջակցության վերաբերյալ ուսումնական նյութերի նախագծի նախապատրաստման վերաբերյալ թեմաները,
- մաքսային մարմինների կինոլոգիական և անասնաբուժական գործունեության զարգացման հետ կապված ուսումնամեթոդական նյութերի հարցերը,
- Պետրոզավոդսկի պետական համալսարանի ներկայացուցիչների՝ շրջակա միջավայրի գործոնների և եղանակային պայմանների ազդեցությամբ պայմանավորված ծառայողական շների աշխատանքի արդյունավետության հետազոտության արդյունքների մասին զեկույցները:

Ուսումնասիրվել են

- 2023թ.-ի մարտ ամսին Բելառուսի Հանրապետության ք. Մինսկում մաքսային մարմինների անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտում ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների մասնագետ-կինոլոգների ուսումնավերապատրաստման ծրագրի կազմակերպման վերաբերյալ հարցերը, ինչպես նաև իրենց կցված ծառայողական շների՝ բնական

թմրամիջոցների կիրառման, ծառայողական շների վարժեցման ստանդարտների նախագծերի և դրանց ամենատարածված ոլորտներում կիրառելու հարցերը,

- աշխատանքային խմբի 2024-2025թթ.-ի աշխատանքային պլանի նախագծի հետ կապված հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային մարմինների պաշտոնյաների և ծառայողական շների վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացման առաջարկները:

Համաձայնեցվել են

- Հրահանգիչ-մեթոդոլոգների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերի նախագծերի համակարգման հետ կապված թեմաները, ինչպես նաև՝ ԱՊՀ անդամ երկրների կինոլոգիական կենտրոնների ուսուցման հիման վրա դրանց հետագա իրականացման վերաբերյալ հարցերը:
- Ծառայողական շների վարժեցման համար նախատեսված ստանդարտ ուսումնական ծրագրերի նախագծերի և դրանց կիրառման ոլորտներում վերաբերյալ հարցերը:
- 2023թ.-ի երկրորդ կիսամյակում տեղի ունեցող աշխատանքային խմբի 27-րդ հանդիպման կամզմակերպման և անցկացմանն առընչվող թեմաները,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ծառայողական շներով կինոլոգիական կառույցների միջև անցկացվող առաջնության 11-րդ բազմամարտի մրցման անցկացման թեմաները, ինչպես նաև՝ «Օդային անցակետերում ծառայողական շների կիրառման առանձնահատկությունները» թեմայով սեմինարի անցկացմանն հետ կապված թեմաները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կինոլոգիական հարցերով աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ՝ Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի, Ադրբեջանի, Ղրղզստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, և Բելառուսի Հանրապետության մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների ղեկավարների հետ և յուրաքանչյուրն իր մասով՝ ելույթի տեսքով, ներկայացրել է 2022թ.-ի երկրորդ կիսամյակում կատարված աշխատանքների, արդյունքների ամփոփ հաշվետվությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում կատարված աշխատանքի արդյունքում ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների ներկայացուցիչները ընդունել են մի շարք որոշումներ՝ այդ թվում հաստատվել են հրահանգիչ-մեթոդիստների մասնագիտական խորացված վերապատրաստման և որկավորման բարձրացման դասընթացների, ծառայողական շների վարժեցման ստանդարտ ծրագրերի նախագծերը:

Որոշում է կայացվել հաստատելու 2023թ.-ի մարտի 20-ից 24-ը ներառյալ Բելառուսի Հանրապետության ք. Մինսկում կազմակերպել և անցկացնել ուսումնապրակտիկ սեմինար կինոլոգ-մասնագետների և նրանց կցված ծառայողական շների հետ՝ կիրառելով բնական թմրամիջոցներ:

Աշխատանքային խմբին հանձնարարվել է դիտարկել 2023թ.-ին շնագիտական կենտրոնների անասնաբույժների և շնավարժ մասնագետների լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրերի կառուցվածքի նախագծերը, ինչպես նաև հրահանգիչ-մեթոդիստների որակավորման բարձրացման միջազգային դասընթացների անցկացման տեղն ու ժամանակը և ներկայացնել Իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի հաստատմանը:

Հավանություն է տրվել մաքսակետում ծառայողական շների կիրառման ստանդարտ հրահանգների նախագծերի համաձայնեցման և մաքսանենգության օբյեկտների որոնման և հայտնաբերման համար ծառայողական շների կիրառման տեխնոլոգիական քարտեզներին և ներկայացվել է Իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի դիտարկմանն ու հաստատմանը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**.

ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների Իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների խորհրդի կինոլոգիական ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային խմբի կողմից Ուզբեկստանի և Ադրբեջանի Հանրապետության մաքսային ծառայությունների կինոլոգիական կառույցների ղեկավարներին առաջարկվել է մինչև 2023թ.-ի հունիսի 23-ը պատրաստել առաջարկություն 2024 և 2025թ-ի առաջին կիսամյակում իրենց մոտ սեմինար անցկացնելու վերաբերյալ:

Աշխատանքային խմբին առաջարկվել է մինչև 2023թ.-ի հունիսի 10-ը ներկայացնել շնավարժ-մասնագետների որակավորման բարձրացման նպատակով ուսումնական սեմինարի անցկացման հնարավոր առաջարկությունները, ինչպես նաև՝ մշակել ուսումնական ծրագրեր ծառայողական շների վարժեցման համար կատարելագործելու դրանց կիրառումը ամենապահանջված ուղղություններում՝ աշխատանքային խմբի հերթական՝ 27-րդ հանդիպմանը քննարկելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ 20.02.2023թ.-ին ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժնում տեղի է ունեցել խորհրդակցություն: Խորհրդակցությունն անց է կացրել բաժնի պետ Շնագիտական /կենտրոն/ բաժնի պետի ժ/թ Կարեն Բալայանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են գործուղման ընթացքում ձեռք բերված որոշումների և պայմանվորվածությունների մասին թեմաները, ինչպես նաև տեղի է ունեցել փորձի փոխանակում ծառայողական շների վարժեցման չափորոշիչների և դրանց կիրառման նորարարական մեթոդների վերաբերյալ:

ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ
ՇՆԱԳԻՏԱԿԱՆ /ԿԵՆՏՐՈՆ/ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Թ,
Մ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԲԱԼԱՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆԻ ԿԱՐԵՆ

Signed by: BALAYAN KAREN 1412760070

21. 02. 2023

Կատ.՝ ՄԴՊՎ Շնագիտական /կենտրոն/ բաժնի
գործավար-օպերատոր Սոնա Մուրադյան
Հեռ. : (010)-30-35-21